*Հավելված*
*Հաշվեքննիչ պալատի*
*2021թ. ապրիլի 30-ի թիվ 115-Ա որոշման*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

# ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**........................................................................................2

**I. ԱՄՓՈՓԱԳԻՐ** ..............................................................................................6

**II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**..........................................6

**III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**....................7

1. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ...............................9

2. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ......................................................12

**IV. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ** ....................................................................................................15

1. ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ, ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ, ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ18

2. ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾԱԽՍԵՐ ..........................................................................20

3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ..........................................20

4. ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ..........................................................21

5. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԸ..............................................................21

5.1. ՀՀ պետական պարտքի կառուցվածքը .................................................. 22

**5.2. ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը և պարտքը բնութագրող ցուցանիշները** ........................................................................................ 24

**5.3. Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին** ...................................................................................... 33

6. ՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ.............................................................35

7. ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ ..........................35

8. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ ..................................................................36

9. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ..............................................37

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ....................38

11. ՀՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ....................38

12. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ ՄԻՄՅԱՆՑ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ....................39

13. ԴՈՏԱՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ....................40

**V. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ .......... 41**

**VI. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ .......... 41**

**VII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ .......... 41**

**Հաշվեքննության հիմքը**

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի փետրվարի 10-ի թիվ 29/Ա որոշում:

**Հաշվեքննության օբյեկտը**

ՀՀ ֆինանսների նախարարություն:

**Հաշվեքննության առարկան**

ՀՀ ֆինանսների նախարարությունում 2020 թվականի պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:

**Հաշվեքննության չափանիշները**

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919 որոշում, «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, «Հայաստանի Հանրապետությության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտ» և այլ իրավական ակտեր:

**Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը**

2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

**Հաշվեքննության կատարման ժամկետը**

2021 թվականի փետրվարի 16-ից մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը ներառյալ:

**Հաշվեքննության**

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի

**մեթոդաբանությունը**

մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ և վերահաշվարկ, ընթացակարգերը:

**Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում**

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի ութերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Արմեն Գևորգյանը:

# I. ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ ֆինանսների նախարարությունում հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ Հաշվեքննիչ պալատի 2021թ. փետրվարի 10-ի թիվ 29-Ա որոշման հիմքով:

Հաշվեքննության առաջադրանքով նախատեսվել է իրականացնել ֆինանսների նախարարությունում 2020 թվականի պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն: Հաշվեքննությունն իրականացվել է 2021 թվականի փետրվարի 16-ից մինչև 2021 թվականի ապրիլի 30-ն ընկած ժամանակահատվածում: Հաշվեքննության ընթացքում կիրառվել են հարցում, վերլուծական ընթացակարգ և վերահաշվարկ ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի 8-րդ վարչության կողմից:

# II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվեքննության իրականացման համար ստացվել է բավարար տեղեկատվություն:

Հաշվեքննության ընթացքում էական անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

ՀՀ ֆինանսների նախարարությանը վերաբերող հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված չեն:

## III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

«ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի եկամուտները հաստատվել են 1,695,009,852.1 հազ.դրամ գումարի չափով, որից՝ հարկային եկամուտների և պետական տուրքերի գումարը կազմել է 1,602,252,712.8 հազ.դրամ, պաշտոնական դրամաշնորհները՝ 35,324,420.2 հազ. դրամ, այլ եկամուտները՝ 57,432,719.1 հազ. դրամ:

2020 թվականի տարեկան եկամուտների ծրագրային (ճշտված) ցուցանիշների և փաստացի կատարողականը հետևյալն է.

Աղյուսակ 1
(մլրդ.դրամ)

| | Տարեկան պլան | Տարեկան ճշտված պլան | Փաստ | Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ |
|---|---|---|---|---|
| **ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ** | **1,695.0** | **1,563.1** | **1,560.7** | **99.8%** |
| այդ թվում՝ | - | - | - | - |
| **Հարկային եկամուտներ և պետական տուրքեր** | **1,602.3** | **1,380.8** | **1,385.2** | **100.3%** |
| **Պաշտոնական դրամաշնորհներ** | **35.3** | **61.9** | **53.2** | **85.9%** |
| **Այլ եկամուտներ** | **57.4** | **120.3** | **122.2** | **101.6%** |

2020 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները (1,560.7 մլն դրամ) կազմել են ճշտված ծրագրով կանխատեսված ցուցանիշի (1,563.1 մլն.դրամ) 99.8%-ը, որից հարկային եկամուտների և պետական տուրքերի փաստացի մուտքերը (1,385.2 մլն դրամ) կազմել են ճշտված ծրագրային ցուցանիշի (1,380.8 մլն դրամ) 100.3%-ը:

Պետական բյուջեի փաստացի եկամուտների 88.8%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի, 3.4%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների, 7.8 %-ը՝ այլ եկամուտների հաշվին:

2019 թվականի համեմատ 2020 թվականի պետական բյուջեի եկամուտները նվազել են 0.3%-ով կամ 4.8 մլրդ դրամով:

Հարկային եկամուտների 2020 թվականի և նախորդ տարվա համեմատական ցուցնիշները հետևյալն են՝

Աղյուսակ 2

(մլն.դրամ)

| h/h | Ցուցանիշ | 2019թ. | | 2020թ. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Հունվար-դեկտեմբեր | տեսակ. կշիռը | Հունվար-դեկտեմբեր | տեսակ. կշիռը | Աճի տեմպը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | ՀՀ պետական բյուջե հաշվեգրված հարկային եկամուտներ և պետական տուրք | 1,464,300.1 | 100.0% | 1,385,205.4 | 100.0% | 94.6% |
| 1.1 | ԱԱՀ | 474,377.1 | 32.4% | 471,588.0 | 34.0% | 99.4% |
| 1.2 | Շահութահարկ | 181,265.6 | 12.4% | 148,763.3 | 10.7% | 82.1% |
| 1.3 | Եկամտային հարկ | 410,348.2 | 28.0% | 411,514.5 | 29.7% | 100.2% |
| 1.4 | Ակցիզային հարկ | 127,535.3 | 8.7% | 123,555.7 | 8.9% | 96.9% |
| 1.5 | Շրջանառության հարկ | 28,998.2 | 2.0% | 26,599.2 | 1.9% | 91.7% |
| 1.6 | Արտոնագրային հարկ | 4,085.9 | 0.3% | 47.6 | 0.0% | 1.2% |
| 1.7 | Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար | 58,261.5 | 4.0% | 53,051.4 | 3.8% | 91.1% |
| 1.8 | Մաքսատուրք | 95,146.7 | 6.5% | 68,267.3 | 4.9% | 71.7% |
| 1.9 | Սոցիալական վճար | 18,671.7 | 1.3% | 24,758.1 | 1.8% | 132.6% |
| 1.10 | Այլ հարկային եկամուտներ | 21,206.3 | 1.4% | 24,035.7 | 1.8% | 114.8% |
| 1.11 | Պետական տուրք | 45,859.6 | 3.1% | 33,446.0 | 2.4% | 72.9% |
| 1.12 | Հարկերի անցումային գերավճար | -1,456.0 | -0.1% | -373.6 | 0.0% | |

2020 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 1,385.2 մլրդ.դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր, որոնք կազմել են ծրագրային ցուցանիշի 100.3%-ը: 2019 թվականի համեմատ հարկային եկամուտներն և պետական տուրքերն նվազել են 5.1%-ով կամ 79.1 մլրդ դրամով:

## 1. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020 թվականին արտաքին աղբյուրներից ստացվել են 53,203,692.6 հազ.դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ճշտված պլանի 85.9%-ը:

Մասնավորապես՝ ոչ նպատակային դրամաշնորհներ կազմել են 47.3 մլրդ դրամ իսկ նպատակային դրամաշնորհները՝ 5.9 մլրդ դրամ:

1. Ոչ նպատակային դրամաշնորհներ, այդ թվում.

Աղյուսակ 3

(մլն.դրամ)

| հ/հ | Դրամաշնորհային ծրագրերի անվանումները | Տարեկան պլան | Տարեկան ճշտված պլան | Փաստ | Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ |
|---|---|---|---|---|---|
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **7,714.9** | **47,289.3** | **47,298.1** | **100.0%** |
| 1 | «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» ֆինանսավորման համաձայնագրի թիվ 1 լրացում | 0.0 | 4,249.3 | 4,249.3 | 100.0% |
| 2 | «Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին. առավել արդյունավետ եւ արձագանքող հանրային կառավարման միջոցով ծառայությունների մատուցման որակի բարելավում» | 1,859.1 | 6,243.8 | 6,243.8 | 100.0% |
| 3 | «Որակավորումների բարելավում՝ ավելի լավ աշխատատեղերի համար» | 4,514.9 | 6,679.3 | 6,679.3 | 100.0% |
| 4 | «Հայաստանում պետական ֆինանսների քաղաքականության բարեփոխումների ծրագիր» | 1,327.9 | 2,682.3 | 2,682.3 | 100.0% |
| 5 | Կովկասի բնության հիմնադրամ | 0.0 | 267.2 | 267.2 | 100.0% |
| 6 | «Աջակցություն Հայաստանում դատական ոլորտի բարեփոխումների իրականացմանը. փուլ 1» ֆինանսավորման համաձայնագիր | 0.0 | 5,699.0 | 5,707.8 | 100.2% |
| 7 | ՌԴ ստացված պաշտոնական դրամաշնորհ | 0.0 | 6,334.0 | 6,334.0 | 100.0% |
| 8 | «COVID-19 համավարակի դիմակայման Հայաստանի պայմանագիր» ֆինանսավորման համաձայնագիր | 0.0 | 15,134.4 | 15,134.4 | 100.0% |
| 9 | Այլ | 13.1 | 0.0 | 0.0 | |

2. Նպատակային դրամաշնորհներ, այդ թվում.

Աղյուսակ 4

(մլն.դրամ)

| հ/հ | Դրամաշնորհային ծրագրերի անվանումները | Տարեկան պլան | Տարեկան ճշտված պլան | Փաստ | Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ |
|---|---|---|---|---|---|
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **27,609.5** | **14,617.9** | **5,905.6** | **40.4%** |
| 1 | Ոռոգման համակարգի առողջացում | 891.2 | 1,136.1 | 88.3 | 7.8% |
| 2 | Անապահով սոցիալական խմբերին աջակցություն | 0.0 | 352.2 | 352.2 | 100.0% |
| 3 | Պետական հատվածի արդիականացման ծրագիր | 1,543.5 | 1,543.5 | 0.0 | 0.0% |
| 4 | Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագիր | 526.6 | 286.8 | 310.1 | 108.1% |
| 5 | Գյուղատնտեսության խթանման ծրագիր | 300.0 | 300.0 | 0.0 | 0.0% |
| 6 | Կոշտ թափոնների կառավարում | 6,170.9 | 297.1 | 11.5 | 3.9% |
| 7 | Ճանապարհային ցանցի բարելավում | 944.1 | 320.5 | 962.1 | 300.2% |
| 8 | Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծրագիր | 1,308.9 | 2,518.2 | 2,151.6 | 85.4% |
| 9 | Աջակցություն արդարադատության ոլորտում իրականացվող ծրագրերին | 39.6 | 39.6 | 35.9 | 90.7% |
| 10 | Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում | 3,064.4 | 1,010.6 | 49.7 | 4.9% |
| 11 | Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում | 1,636.0 | 1,378.6 | 81.2 | 5.9% |
| 12 | Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն | 952.9 | 369.4 | 121.9 | 33.0% |
| 13 | Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում և պահպանում | 1,322.0 | 1,322.0 | 435.1 | 32.9% |
| 14 | Քաղաքային զարգացում | 3,895.5 | 1,839.1 | 785.3 | 42.7% |
| 15 | Էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման ծրագիր | 3,516.5 | 364.5 | 120.1 | 33.0% |
| 16 | Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում | 190.6 | 190.6 | 16.3 | 8.6% |
| 17 | Վիճակագրական համակարգի ամրապնդման ազգային ռազմավարական ծրագիր | 781.2 | 781.2 | 230.6 | 29.5% |
| 18 | Տարածքային զարգացում | 325.2 | 367.5 | 7.7 | 2.1% |
| 19 | Արդյունահանող ճյուղերի զարգացման ծրագիր | 200.6 | 200.6 | 138.1 | 68.8% |
| 20 | Աջակցություն Մարդու իրավունքների պաշտպանի | 0.0 | 0.0 | 8.0 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | աշխատակազմի կողմից իրականացվող ծրագրերին | | | | |

Աղյուսակ 5
(մլն.դրամ)

| **Նպատակային դրամաշնորհները ըստ ֆինանսավորման աղբյուրների** | **2020 թ. տարեկան ճշտված պլան** | **2020 թ. ստացված** | **Կատար ման %** |
|---|---|---|---|
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **14,617.9** | **5,905.6** | **40.4%** |
| Ասիական զարգացման բանկ | 987.5 | 1,025.1 | 103.8% |
| Եվրոպական միության աջակցությամբ ծրագրեր | 1,473.2 | 969.7 | 65.8% |
| Գլոբալ հիմնադրամ | 1,158.7 | 891.7 | 77.0% |
| Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ | 2,167.3 | 796.8 | 36.8% |
| Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW) | 2,042.9 | 643.5 | 31.5% |
| Համաշխարհային բանկ | 1,134.2 | 448.7 | 39.6% |
| ԱՄՆ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրեր | 624.9 | 363.6 | 58.2% |
| ՄԱԿ-ի աջակցությամբ իրականացվող ծրագրեր | 352.2 | 360.3 | 102.3% |
| ՀՀ կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամ | 355.3 | 234.8 | 66.1% |
| Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ | 226.5 | 80.0 | 35.3% |
| Գերմանիայի զարգացման և Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկի աջակցությամբ | 97.0 | 49.7 | 51.2% |
| Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի | 142.9 | 41.8 | 29.3% |
| Զարգացման ֆրանսիական գործակալության | 2,105.9 | 0.0 | 0.0% |
| Ռուսաստանի Դաշնություն | 1,722.3 | 0.0 | 0.0% |
| Արևելյան եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի | 27.0 | 0.0 | 0.0% |

Նպատակային դրամաշնորհների կատարողականի ցածր ցուցանիշը պայմանավորված է նպատակային ծրագրերի կատարողականով, որը կազմել է նախատեսված ցուցանիշի 40.4%-ը:

Մասնավորապես չեն ստացվել Զարգացման ֆրանսիական գործակալության, Ռուսաստանի Դաշնության և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ նախատեսված շուրջ 3.85 մլրդ. դրամ դրամաշնորհները, որոնք համապատասխանաբար կազմել են՝ 2.1 մլրդ դրամ, 1.72 մլրդ դրամ և 27 մլն դրամ:

2020 թվականի ընթացքում պետական բյուջե մուտքագրված պաշտոնական դրամաշնորհները ավելի քան 4.3 անգամ կամ 40.8 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը:

## 2. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները 2020 թվականի կազմել են 122,246.2 մլն դրամ, որը 1,6%-ով կամ 1,920.3 մլն դրամով ավելի է կազմել 2020 թվականի ճշտված ծրագրային ցուցանիշից, ինչը հիմնականում պայմանավորված է պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարներից եկամուտի, ինչպես նաև օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների կատարողականով: 2020 թվականին այլ եկամուտները նախորդ տարվա նկատմամբ ավելի են կազմել շուրջ 37.7%-ով կամ 33.4 մլրդ դրամով:

2020 թվականի պետական բյուջեի այլ եկամուտների կառուցվածքը հետևյալն է.

Աղյուսակ 6

(մլն.դրամ)

| Եկամուտներ | Տարեկան հաստատված պլան | Տարեկան ճշտված պլան | 2020թ. Փաստ | Կատարման %-ը տարեկան ճշտված ծրագրի նկատմամբ |
|---|---|---|---|---|
| **Ընդամենը այլ եկամուտներ, այդ թվում՝** | **57,432.7** | **120,326.0** | **122,246.2** | **101.6%** |
| **1. Կառավարման մարմինների ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից պետական բյուջեի մուտքեր** | **0.0** | **0.0** | **1,318.5** | **-** |
| **2. Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ, այդ թվում՝** | **255.0** | **262.4** | **391.2** | **149.1%** |
| պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից եկամուտներ | 211.2 | 211.2 | 328.4 | 155.5% |
| պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարներ | 0.0 | 0.0 | 0.6 | - |
| Երևան քաղաքում գտնվող ինքնակամ կառույցի պետական սեփականության ճանաչում | 0.0 | 0.0 | 0.0 | - |
| պետական անտառների և անտառային հողերի օգտագործման վճարներ | 0.0 | 0.0 | 0.2 | - |
| պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ, որոնք թողնվում են վարձակալի տնօրինությանը | 0.0 | 7.4 | 7.4 | 100.0% |

| | | | | |
|---|---|---|---|---|
| պետական սեփականություն հանդիսացող շենքի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման վարձավճարներից պետական բյուջե մուտքագրված (մուտքագրվելիք) մաս | 43.8 | 43.8 | 54.7 | 124.9% |
| **3. Տոկոսավճարներ և շահաբաժիններ, այդ թվում՝** | **7,708.1** | **20,309.8** | **20,663.2** | **101.7%** |
| Բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարներ | 5,700.0 | 17,099.6 | 17,099.6 | 100.0% |
| Իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններ | 2,008.1 | 3,210.2 | 3,563.5 | 111.0% |
| **4. Պետության կողմից տված վարկերի օգտագործման դիմաց վճարներ՝ (տոկոսներ), այդ թվում՝** | **10,248.9** | **10,248.9** | **14,566.4** | **142.1%** |
| ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարներ | 10,151.2 | 10,151.2 | 14,379.2 | 141.7% |
| ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարներ | 97.8 | 97.8 | 97.8 | 100.0% |
| COVID-19 տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված տնտեսվարողներին վարկային միջոցների տրամադրման վճար | 0.0 | 0.0 | 89.5 | - |
| **5. Այլ կատեգորիաներում չդասակարգված տրանսֆերտներ** | **0.0** | **54,412.2** | **54,485.3** | **100.1%** |
| **6. Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքեր** | **13,424.4** | **13,424.4** | **11,540.9** | **86.0%** |
| **7. Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտներ** | **24,505.3** | **19,192.9** | **16,376.4** | **85.3%** |
| **8. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտներ** | **1,291.0** | **2,475.3** | **2,904.4** | **117.3%** |

Մասնավորապես այլ եկամուտներից՝

- 16.4 մլրդ դրամը ստացվել է ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից՝ 85.3%-ով ապահովելով տարեկան ծրագրային ցուցանիշը, իսկ նախորդ տարվա համեմատ նշված եկամուտները նվազել են 51.8%-ով կամ 17.6 մլրդ դրամով:
- 17.1 մլրդ դրամը կազմել է հաշվետու ժամանակահատվածում բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների օգտագործումից ստացված տոկոսավճարները՝ 100%-ով ապահովելով տարեկան ճշտված ծրագրային ցուցանիշը և 34.6%-ով (4.4 մլրդ դրամով) գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը:
- 14.6 մլրդ դրամը կազմել է պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց հաշվետու ժամանակահատվածում ստացված տոկոսավճարները, որոնք 42.1%-ով (4.3 մլրդ դրամով) գերազանցելով տարեկան ճշտված ցուցանիշը և 46.3%-ով (4.6 մլրդ դրամով)՝ նախորդ տարվա մուտքերը:
- 11.5 մլրդ դրամը կազմել է 2020 թվականի ընթացքում իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը՝ 86.0%-ով ապահովելով տարեկան ճշտված ցուցանիշը և 26.3%-ով կամ 4.1 մլրդ դրամով պակաս կազվելով նախորդ տարվա մուտքերից:
- 3.6 մլրդ դրամը կազմել են իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացված շահութաբաժինները՝ 11%-ով գերազանցելով ծրագրված (ճշտված) մուտքերը և 65.7%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:
- 54.5 մլրդ դրամը կազմել են այլ կատեգորիաներում չդասակարգված տրանսֆերտները՝ 0.1%-ով գերազանցելով տարեկան ծրագիրը:

## IV. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին օրենքով ֆինանսների նախարարության կողմից իրականացվող ծախսերի տարեկան պլանը սահմանվել է 234,248,291.25 հազ.դրամ, ճշտված պլանը՝ 227,054,830.59 հազ.դրամ: Ֆինանսավորումը կազմել է 223,080,007.92 հազ.դրամ:

Ֆինանսների նախարարության կողմից իրականացված դրամարկղային ծախսը կազմել է 223,076,759.79 հազ.դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 223,091,293.71 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 98.25%:

ՀՀ Ֆինանսների նախարարության 2020 թվականի բյուջեի ծախսերի կատարողականը ըստ ծրագրերի (միջոցառումների) հետևյալն է.

Աղյուսակ 7

(հազ.դրամ)

| Ծրագրի կոդը | Միջոցառում, հոդված | Տարեկան պլան | Տարեկան ճշտված պլան | Փաստ | Փաստացի ծախս | Կատա-րողա-կան (%) |
|---|---|---|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 234,248,291.25 | 227,054,830.59 | 223,076,759.79 | 223,091,293.71 | 98.25 |
| 1006 | Արտարժութային պետական պարտատոմսերի թողարկմանն առնչվող ծախսեր | 1,624.50 | 1,150.50 | 1,111.12 | 1,111.12 | 96.58 |
| 1006 | ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի հրապարակայնության ապահովում | 31,000.00 | 28,843.23 | 28,843.23 | 28,843.23 | 100.00 |
| 1006 | Պարտքի կառավարմանն առնչվող տեղեկատվական համակարգերի և ծրագրերի սպասարկում | 35,575.90 | 37,167.90 | 36,934.91 | 36,934.91 | 99.37 |
| 1006 | Կառավարության պարտքի սպասարկում | 168,023,209.15 | 166,722,091.15 | 164,674,517.96 | 164,674,517.96 | 98.77 |
| | *- Ներքին փոխառություններ* | *85,495,848.90* | *86,995,848.90* | *86,805,001.26* | *86,805,001.26* | *99.78* |
| | *- Արտաքին փոխառություններ* | *82,527,360.25* | *79,726,242.25* | *77,869,516.70* | *77,869,516.70* | *97.67* |
| 1006 | Մուրհակների սպասարկում | 93,232.00 | 93,322.30 | 92,842.36 | 92,842.36 | 99.49 |
| | *- Ներքին արժեթղթերի փոխառություններ* | - | - | *92,842.36* | *92,842.36* | - |
| 1015 | Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում | - | 35,136.00 | 23,452.85 | 23,452.85 | 66.75 |
| 1018 | Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում | 39,830.20 | 39,830.20 | - | - | - |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1018 | Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագիր շրջանակներում ԿՖԿՏՀ ներդրում | 1,820,363.10 | 1,820,363.10 | - | - | - |
| 1031 | Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստում | 32,112.00 | 24,993.50 | 17,647.00 | 17,647.00 | 70.61 |
| 1093 | Սնանկության գործերով կառավարչական ծառայությունների ձեռքբերում | 34,000.00 | 34,000.00 | 25,202.00 | 25,202.00 | 74.12 |
| 1108 | Պլանավորում, բյուջետավորում, գանձապետական ծառայություններ, պետական պարտքի կառավարում, տնտեսական և հարկաբյուջետային քաղաքականության մշակում և մոնիտորինգ | 2,495,967.90 | 2,358,563.47 | 2,321,651.84 | 2,336,185.76 | 98.43 |
| | - *Աշխատանքի վարձատրություն* | 2,306,231.60 | 2,219,767.10 | 2,219,767.10 | 2,222,230.28 | 100.00 |
| | - *Ծառայությունների եվ ապրանքների ձեռքբերում* | 185,827.20 | 134,202.27 | 98,503.62 | 110,574.36 | 73.40 |
| | - *Այլ ծախսեր* | 3,909.10 | 4,594.10 | 3,381.12 | 3,381.12 | 73.60 |
| 1108 | Ֆինանսական կառավարման համակարգի վճարահաշվարկային ծառայություններ | 243,512.50 | 241,211.60 | 238,853.80 | 238,853.80 | 99.02 |
| | - *Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր* | *36,461.60* | *16,061.60* | *13,764.00* | *13,764.00* | *85.70* |
| | - *Համակարգչային ծառայություններ* | *206,798.90* | *224,800.00* | *224,800.00* | *224,800.00* | *100.00* |
| | - *Տեղեկատվական ծառայություններ* | *252.00* | *350.00* | *289.80* | *289.80* | *82.80* |
| 1108 | ՀՀ միջազգային վարկանիշի տրամադրում | 80,816.70 | 82,316.70 | 81,973.10 | 81,973.10 | 99.58 |
| 1108 | ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ | - | 22,748.50 | 22,748.44 | 22,748.44 | 100.00 |
| 1108 | Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ | - | 2,876.14 | 764.91 | 764.91 | 26.60 |
| 1108 | ՀՀ ֆինանսների նախարարության տեխնիկական հագեցվածության բարելավում | 20,159.20 | - | - | - | - |
| 1137 | Էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկում | 18,000.00 | 19,700.00 | 19,700.00 | 19,700.00 | 100.00 |
| 1137 | Գնումների պլանների կազմման, էլեկտրոնային մրցույթների անցկացման, պայմանագրերի կատարման և գնումների հաշվետվողականության՝ միմյանց ինտեգրված մոդուլների տեխնիկական սպասարկում | 99,955.00 | 107,035.50 | 107,035.47 | 107,035.47 | 100.00 |
| 1165 | Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր | 1,585,956.00 | - | - | - | - |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1165 | Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում շենքերի և շինությունների հիմնանորոգում | 1,935,052.80 | - | - | - | - |
| 1165 | Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում սարքավորումների ձեռքբերում | 2,274,443.50 | - | - | - | - |
| 1205 | Վնասի փոխհատուցում կերակրողը կորցրած անձանց | 4,945.80 | 4,945.80 | 4,945.80 | 4,945.80 | 100.00 |
| 1212 | Ֆինանսական աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին | 55,378,535.00 | 55,378,535.00 | 55,378,535.00 | 55,378,535.00 | 100.00 |
| | *- Ֆինանսական համահարթեցման սկզբունքով փրվող դոփացիաներ* | *55,312,261.70* | *55,312,261.70* | *55,312,261.70* | *55,312,261.70* | *100.00* |
| | *- Օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուսփների փոխհափուցում* | *66,273.30* | *66,273.30* | *66,273.30* | *66,273.30* | *100.00* |

## 1. ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ, ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ, ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 2,495,967.9 հազ.դրամ գումար, 2020թ. տարեկան ճշտված պլանը կազմել է 2,358,563.47 հազ.դրամ: Ֆինանսավորումը կազմել է 2,322,788.74 հազ.դրամ, դրամարկղի ծախսը՝ 2,321,651.84 հազ.դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 2,336,185.76 հազ.դրամ: Ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 36,911.63 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 98.43%:

Նշված միջոցառման շրջանակներում ծախսերն ունեն հետևյալ կատարողականները.

Աղյուսակ 8

(հազ.դրամ)

| Միջոցառում (հոդված) | Տարեկան ճշտված պլան | Փաստ | Կատարողական (%) |
|---|---|---|---|
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **2,358,563.47** | **2,321,651.84** | **98.43** |
| **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ** | **2,219,767.10** | **2,219,767.10** | **100.00** |
| - Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 1,731,840.70 | 1,731,840.70 | 100.00 |
| - Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | 329,230.50 | 329,230.50 | 100.00 |
| - Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում | 158,695.90 | 158,695.90 | 100.00 |
| **ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ** | **134,202.27** | **98,503.62** | **73.40** |
| - Էներգետիկ ծառայություններ | 4,061.90 | 3,051.18 | 75.12 |
| - Կոմունալ ծառայություններ | 997.00 | 423.74 | 42.50 |
| - Կապի ծառայություններ | 15,660.00 | 11,052.55 | 70.58 |
| - Ապահովագրական ծախսեր | 200.12 | 200.00 | 99.94 |
| - Ներքին գործուղումներ | 24,628.13 | 21,791.50 | 88.48 |
| - Համակարգչային ծառայություններ | 13,535.70 | 13,464.48 | 99.47 |
| - Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ | - | - | - |
| - Տեղեկատվական ծառայություններ | 498.00 | 498.00 | 100.00 |
| - Կառավարչական ծառայություններ | 23,708.24 | 17,612.24 | 74.29 |
| - Ներկայացուցչական ծախսեր | - | - | - |
| - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 41,492.00 | 22,064.29 | 53.18 |
| - Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 1,150.00 | 103.55 | 9.00 |
| - Գրասենյակային նյութեր և հագուստ | 4,167.73 | 4,167.63 | 100.00 |

| | | | |
|---|---|---|---|
| - Տրանսպորտային նյութեր | 950.00 | 942.00 | 99.16 |
| - Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 1,804.05 | 1,783.14 | 98.84 |
| - Հատուկ նպատակային այլ նյութեր | 1,349.40 | 1,349.32 | 99.99 |
| **ԱՅԼ ԾԱԽՍԵՐ** | **4,594.10** | **3,381.12** | **73.60** |

Աշխատանքի վարձատրության գծով ֆինանսավորումը կազմել է **2,219,767.10 հազ.դրամ**, փաստացի ծախսը՝ **2,222,230.28 հազ.դրամ**, դրամարկղի ծախսը՝ **2,219,767.10 հազ.դրամ**:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերումների և այլ ծախսերի գծով ֆինանսավորումը կազմել է 99,640.52 հազ.դրամ, դրամարկղի ծախսը՝ **98,503.62 հազ.դրամ**, իսկ փաստացի ծախսը՝ 110,574.36 հազ.դրամ:

Այլ ծախսերի գծով ֆինանսավորումը, դրամարկղի և փաստացի ծախսը կազմել է **3,381.12 հազ.դրամ**:

Աղյուսակ 9

| Արդյունքի չափորոշիչներ | Տարեկան ճշտված պլան | Փաստ |
|---|---|---|
| Մշակվող ռազմավարական փաստաթղթերի քանակ (հատ) | 10 | 10 |
| Նորմատիվ իրավական ակտերի քանակ (հատ) | 45 | 45 |
| Համակարգվող, իրականացվող և վերահսկման ենթարկվող ծրագրերի քանակ (հատ) | 4 | 4 |
| Համակարգվող, իրականացվող և վերահսկման ենթարկվող միջոցառումների քանակ (հատ) | 12 | 14 |
| **Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)** | **2,358,563.47** | **2,321,651.84** |

## 2. ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾԱԽՍԵՐ

«Արտարժութային պետական պարտատոմսերի թողարկմանն առնչվող» միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան պլանով նախատեսվել է 1,624.50 հազ.դրամ, ճշտված պլանով՝ 1,150.50 հազ.դրամ գումար: Ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 1,111.12 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 96.58%: Պլանային ցուցանիշների համեմատ տարբերությունը կազմում է 39.38 հազ.դրամ:

Ցուցակումն իրականացվել է Իռլանդական ֆոնդային բորսայի կողմից (Euronext Dublin), իրավաբանական անձի նույնականիշը տրամադրվում է “Bloomberg Finance L.P.” կազմակերպության կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում սույն միջոցառման գծով վճարվել է “Bloomberg Finance L.P.” կազմակերպության կայքում իրավաբանական անձի նույնականիշի թարմացման դիմաց վճարումը, որի համաձայն հիշյալ ծառայության դիմաց 2020 թվականին գործող գնացուցակի կազմել է 50 ԱՄՆ դոլար: Հաշվի առնելով, որ այդ վճարումը հնարավոր էր իրականացնել բացառապես բանկային քարտի միջոցով և ՀՀ ֆինանսների նախարարությունում նման տեսակի վճարումների համար բանկային քարտի բացակայությունը, ծառայության դիմաց պահանջված գումարը փաստացի վճարվել է ՀՀ ֆինանսների նախարարության պետական պարտքի կառավարման վարչության պետի անձնական բանկային քարտից:

## 3. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

«ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի հրապարակայնության ապահովում» միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան պլանով նախատեսվել է 31,000.0 հազ.դրամ, ճշտված պլանով՝ 28,843.23 հազ.դրամ:

Սույն միջոցառումով՝ պետական պարտատոմսերի թողարկման, պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման և գանձապետական պահառուի համակարգի վերաբերյալ հեռուստատեսային և ռադիո հաղորդումների, հայտարարությունների հեռարձակման, ՀՀ պետական պարտքի տարեկան հաշվետվության և պետական բյուջեի կատարման հաշվետվությունների հրապարակման գծով, հաշվետու

ժամանակաշրջանում դրամարկղի և փաստացի ծախսերը կազմել են 28,843.23 հազ.դրամ:

## 4. ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան պլանով նախատեսվել է 35,575.90 հազ.դրամ, ճշտված պլանով՝ 37,167.9 հազ.դրամ գումար: Ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 36,934.91 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 99.37%:

Բլումբերգ և Ռոյթերս տեղեկատվական համակարգերի առևտրային տերմինալներով նախատեսված տեղեկատվության նվազագույն անխափան հասանելիության մակարդակը ապահովվել է 95% տոկոսով:

Պլանային ցուցանիշների համեմատ տարբերությունը կազմում է 232.99 հազ.դրամ, ինչը պայմանավորված է ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի կանխատեսումային և փաստացի ձևավորված փոխարժեքների տարբերությամբ:

## 5. ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԸ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 4,164.3 մլրդ դրամ կամ 7,968.5 մլն ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 10

| | 31.12.2019թ. | | 31.12.2020թ. | |
|---|---|---|---|---|
| | մլրդ դրամ | % ՀՆԱ-ի նկատմամբ | մլրդ դրամ | % ՀՆԱ-ի նկատմամբ |
| ***ՀՀ պետական պարտք*** որից՝ | ***3,512.0*** | **53.5** | **4,164.3** | **67.3** |
| ՀՀ կառավարության պարտք | 3,277.3 | 49.9 | 3,923.9 | 63.5 |
| ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտք | 234.7 | 3.6 | 240.4 | 3.9 |

Պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 67.3%՝ նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 13.9 տոկոսային կետով:

Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 63.5%՝ նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ աճել է 13.6 տոկոսային կետով:

## 5.1. ՀՀ պետական պարտքի կառուցվածքը

Աղյուսակ 11

| ՀՀ պետական պարտքի կառուցվածքը | 31.12.2019թ. | | | 31.12.2020թ. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մլն ԱՄՆ դոլար | մլրդ դրամ | Տես.կշիռ | մլն ԱՄՆ դոլար | մլրդ դրամ | Տես.կշիռ |
| ***ՀՀ պետական պարտք*** ***այդ թվում՝*** | **7,321.3** | **3,512.0** | ***100.0%*** | **7,968.5** | **4,164.3** | ***100.0%*** |
| **ՀՀ կառավարության պարտք** **այդ թվում՝** | **6,831.9** | **3,277.3** | ***93.3%*** | **7,508.5** | **3,923.9** | ***94.2%*** |
| *արտաքին պարտք* | *5,295.2* | *2,540.1* | *72.3%* | *5,593.2* | *2,923.0* | *70.2%* |
| *ներքին պարտք* | *1,536.7* | *737.2* | *21.0%* | *1,915.3* | *1,000.9* | *24.0%* |
| **ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտք** **այդ թվում՝** | **489.3** | **234.7** | ***6.7%*** | **459.9** | **240.4** | ***5.8%*** |
| ՀՀ կառավարության երաշխիքով տրամադրված վարկեր | 129.0 | 61.9 | *1.8%* | 120.7 | 63.1 | *1.5%* |

Աղյուսակ 12

| ՀՀ պետական պարտքի կառուցվածքը ըստ ռեզիդենտության | 31.12.2019թ. | | | 31.12.2020թ. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մլն ԱՄՆ դոլար | մլրդ դրամ | Տես.կշիռ | մլն ԱՄՆ դոլար | մլրդ դրամ | Տես.կշիռ |
| ***ՀՀ պետական պարտք*** ***այդ թվում՝*** | **7,321.3** | **3,512.0** | ***100.0%*** | **7,968.5** | **4,164.3** | ***100.0%*** |
| ՀՀ արտաքին պետական պարտք | 5,784.6 | 2,774.8 | *79.0%* | 6,053.1 | 3,163.3 | *76.0%* |
| ՀՀ ներքին պետական պարտք | 1,536.7 | 737.2 | *21.0%* | 1,915.3 | 1,000.9 | *24.0%* |

Աղյուսակ 13

| ՀՀ պետական պարտքի արտարժույթային կառուցվածքը | 31.12.2019թ. | | | 31.12.2020թ. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մլն ԱՄՆ դոլար | մլրդ դրամ | Տես.կշիռ | մլն ԱՄՆ դոլար | մլրդ դրամ | Տես.կշիռ |
| **ՀՀ պետական պարտք այդ թվում՝** | **7,321.3** | **3,512.0** | ***100.0%*** | **7,968.5** | **4,164.3** | ***100.0%*** |
| ՀՀ դրամով ներգրավված պարտք | 1,419.7 | 681.0 | *19.4%* | 1,834.8 | 958.8 | *23.0%* |
| Արտարժույթով ներգրավված պարտք այդ թվում՝ | 5,901.5 | 2831.0 | *80.6%* | 6,133.7 | 3,205.4 | *77.0%* |

2019թ. նկատմամբ ՀՀ պետական պարտքը աճել է 652. 2 մլրդ դրամով՝ 18. 6%-ով կամ 647. 2 ԱՄՆ դոլարով՝ 8. 8%-ով:

ՀՀ կառավարության պարտքը 2019 և 2020 թվականների պետական պարտքի կառուցվածքում կազմել է համապատասխանաբար 93. 3% և 94. 2%, իսկ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը՝ համապատասխանաբար 6. 7% և 5. 8%: 2020 թվականին ՀՀ կառավարության պարտքի տեսկարար կշիռը ՀՀ պետական պարտքի կառուցվածքում 2019 թվականի համեմատությամբ աճել, իսկ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը նվազել է 0. 9 տոկասային միավորով:

2020 թվականին ՀՀ պետական պարտքի աճը տեղի է ունեցել ի հաշիվ ՀՀ կառավարության պարտքի աճի, որը դոլարային արտահայտությամբ 2019 թվականի նկատմամբ աճել է 9. 9%-ով կամ 676. 6 մլն ԱՄՆ դոլարով, իսկ դրամային արտահայտությամբ 19.7%-ով կամ 646. 6 մլրդ դրամով: ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքի դոլարային արտահայտությամբ հակառակը՝ նվազել է շուրջ 6%-ով կամ 29. 4 մլն ԱՄՆ դոլարով, իսկ դրամային արտահայտությամբ աճել է շուրջ 2. 4%-ով կամ 5. 6 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հանգամանքով (ՀՀ դրամի ԱՄՆ դոլարի, եվրոյի և SDR-ի նկատմամբ արժեզրկմամբ, ինչպես նաև ԱՄՆ դոլարի եվրոյի և SDR-ի նկատմամբ արժեզրկմամբ):

## 5.2. ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը և պարտքը բնութագրող ցուցանիշները

### ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ ռեզիդենտության և գործիքակազմի.

Աղյուսակ 14

| | 31.12.2019թ. | | | 31.12.2020թ. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մլն ԱՄՆ դոլար | մլրդ դրամ | Տեს. կշիռ | մլն ԱՄՆ դոլար | մլրդ դրամ | Տեს. կշիռ |
| **ՀՀ կառավարության պարտք** **այդ թվում՝** | **6,831.9** | **3,277.3** | ***100.0%*** | **7,508.5** | **3,923.9** | ***100.0%*** |
| ***արտաքին պարտք*** ***այդ թվում՝*** | **5,295.2** | **2,540.1** | ***77.5%*** | **5,593.2** | **2,923.0** | ***74.5%*** |
| արտաքին վարկեր և փոխառություններ | 4,306.7 | 2,065.9 | *63.0%* | 4,665.2 | 2,438.0 | *62.1%* |
| ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր | 7.0 | 3.3 | *0.1%* | - | - | *0.0%* |
| ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսեր | 973.7 | 467.1 | *14.3%* | 919.4 | 480.5 | *12.2%* |
| արտաքին երաշխիքներ | 7.8 | 3.8 | *0.1%* | 8.6 | 4.5 | *0.1%* |
| ***ներքին պարտք*** ***այդ թվում՝*** | **1,536.7** | **737.2** | ***22.5%*** | **1,915.3** | **1,000.9** | ***25.5%*** |
| ներքին վարկեր և փոխառություններ | - | - | - | - | - | - |
| ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր | 1,412.8 | 677.7 | *20.7%* | 1,834.8 | 958.8 | *24.4%* |
| ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսեր | 124.0 | *59.5* | *1.8%* | 80.6 | *42.1* | *1.1%* |
| ներքին երաշխիքներ | - | - | - | - | - | - |

Աղյուսակ 15

| | Փոփոխությունը (աճ/նվազում) 2019թ. նկատմամբ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մլն ԱՄՆ դոլար | % | Տես. կշիռ | մլրդ դրամ | % | Տես.կշիռ |
| **ՀՀ կառավարության պարտք**<br>**այդ թվում՝** | **676.6** | **9.9%** | **100.0%** | **646.6** | **19.7%** | **100.0%** |
| ***արտաքին պարտք***<br>***այդ թվում՝*** | **298.0** | **5.6%** | **44.0%** | **382.8** | **15.1%** | **59.2%** |
| արտաքին վարկեր և փոխառություններ | 358.5 | 8.3% | 53.0% | 372.1 | 18.0% | 57.5% |
| ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր | -7.0 | -100.0% | -1.0% | -3.3 | -100.0% | -0.5% |
| ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսեր | -54.3 | -5.6% | -8.0% | 13.4 | 2.9% | 2.1% |
| արտաքին երաշխիքներ | 0.7 | 9.5% | 0.1% | 0.7 | 19.3% | 0.1% |
| ***ներքին պարտք***<br>***այդ թվում՝*** | **378.6** | **24.6%** | **56.0%** | **263.8** | **35.8%** | **40.8%** |
| ներքին վարկեր և փոխառություններ | - | - | - | - | - | - |
| ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր | 422.0 | 29.9% | 62.4% | 281.1 | 41.5% | 43.5% |
| ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսեր | -43.4 | -35.0% | -6.4% | -17.4 | -29.2% | -2.7% |
| ներքին երաշխիքներ | - | - | - | - | - | - |

## ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը ըստ վարկատուների.

Աղյուսակ 16

(մլն.դրամ)

| | 31.12.2019 | | | 31.12.2020 | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մլն ԱՄՆ դոլար | մլրդ դրամ | Տես. կշիռ | մլն ԱՄՆ դոլար | մլրդ դրամ | Տես. կշիռ |
| | **4,306.7** | **2,065.9** | **100.0%** | **4,665.2** | **2,438.0** | **100.0%** |
| **Միջազգային կազմակերպություններ** | **3,237.4** | **1,553.0** | **75.2%** | **3,588.2** | **1,875.1** | **76.9%** |
| որից՝ | | | | | | |
| Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ (IBRD) | 768.3 | 368.6 | 17.8% | 793.3 | 414.6 | 17.0% |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Զարգացման Միջազգային Ընկերակցություն (IDA) | 1,011.5 | 485.2 | 23.5% | 994.5 | 519.7 | 21.3% |
| Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ (EBRD) | 19.2 | 9.2 | 0.4% | 20.6 | 10.8 | 0.4% |
| Եվրոպական Ներդրումային Բանկ (EIB) | 117.0 | 56.1 | 2.7% | 133.0 | 69.5 | 2.9% |
| Գյուղ. Զարգացման Միջազգային Հիմնադրամ (IFAD) | 64.3 | 30.8 | 1.5% | 67.3 | 35.2 | 1.4% |
| ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամ (OFID) | 53.9 | 25.9 | 1.3% | 50.2 | 26.2 | 1.1% |
| Ասիական Զարգացման Բանկ (ADB) | 768.9 | 368.9 | 17.9% | 774.9 | 405.0 | 16.6% |
| Արժույթի Միջազգային Հիմնադրամ (IMF) | 51.2 | 24.6 | 1.2% | 357.7 | 186.9 | 7.7% |
| Եվրամիություն (EU) | 72.8 | 34.9 | 1.7% | 79.7 | 41.7 | 1.7% |
| Եվրասիական Զարգացման Բանկ (Կայունացման և Զարգացման Եվրասիական Հիմնադրամի կառավարիչ) | 310.1 | 148.8 | 7.2% | 317.0 | 165.6 | 6.8% |
| **Օտարերկրյա պետություններ** | **1,048.9** | **503.1** | **24.4%** | **1,056.5** | **552.1** | **22.6%** |
| որից՝ | | | | | | |
| Ռուսաստանի Դաշնություն (RF) | 396.5 | 190.2 | 9.2% | 359.4 | 187.8 | 7.7% |
| Գերմանիա (KfW) | 256.2 | 122.9 | 5.9% | 278.1 | 145.3 | 6.0% |
| Ֆրանսիա (France) | 127.2 | 61.0 | 3.0% | 149.7 | 78.3 | 3.2% |
| ԱՄՆ (USA) | 16.6 | 8.0 | 0.4% | 14.7 | 7.7 | 0.3% |
| Ճապոնիա (JICA) | 225.5 | 108.2 | 5.2% | 227.6 | 118.9 | 4.9% |
| Աբու-Դաբիի Զարգացման Հիմնադրամ | 4.6 | 2.2 | 0.1% | 4.0 | 2.1 | 0.1% |
| Չինաստանի Արտահանման-Ներմուծման Բանկ | 22.3 | 10.7 | 0.5% | 23.0 | 12.0 | 0.5% |
| **Առևտրային բանկեր** | **20.5** | **9.8** | **0.5%** | **20.6** | **10.7** | **0.4%** |
| որից՝ | | | | | | |
| ԿԲՍ Բանկ (Բելգիա) | 3.3 | 1.6 | 0.1% | 3.0 | 1.6 | 0.1% |
| Ռայֆայզն Բանկ (Ավստրիա) | 8.0 | 3.8 | 0.2% | 7.7 | 4.0 | 0.2% |
| Էրստե Բանկ (Ավստրիա) | 9.2 | 4.4 | 0.2% | 9.8 | 5.1 | 0.2% |

ՀՀ կառավարության պարտքը 2020 թվականին կազմել է 3,923. 9 մլրդ. դրամ կամ 7,508. 5 մլն ԱՄՆ դոլար: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում արտաքին պարտքը կազմում է 74. 5% իսկ ներքին պարտքը՝ 25. 5%:

2020 թվականին ՀՀ կառավարության պարտքը դրամային արտահայությամբ 2019 թվականի նկատմամբ աճել է 646. 6 մլրդ դրամով կամ 19. 7%-ով, որից 382. 8 մլրդ դրամը կամ 59. 2%-ը կազմում է արտաքին պարտքի աճը, իսկ 263. 8 մլրդ դրամը

կամ 40.8%-ը՝ ներքին պարտքի աճը: Դոլարային արտահայտությամբ ՀՀ կառավարության պարտքի աճը կազմել է 9.9%՝ շուրջ 676.6 մլն. ԱՄՆ դոլար, որի կազմում ներքին պարտքի տեսակարար կշիռը կազմել է 56%: Հետևաբար դոլարային արտահայտությամբ ՀՀ կառավարության պարտքի բացարձակ արժեքով աճը հիմնականում պայմանավորված է ներքին պարտքի աճով:

ՀՀ կառավարության արտաքին պարտքը 2020 թվականին կազմել է 2,923.0 մլրդ. դրամ կամ 5,593.2 մլն ԱՄՆ դոլար, աճը 2019 թվականի նկատմամբ կազմել է 382.8 մլրդ. դրամ կամ 15.1%: ՀՀ կառավարության արտաքին պարտքի կազմում 83.4%-ը բաժին է ընկնում արտաքին վարկերին և փոխառություններին, 16.4%-ը՝ ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժութային պետական պարտատոմսերին:

Ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական գանձապետական պարտատոմսերի ծավալը մինչև 25.12.2020թ. գրեթե չի փոխվել (շուրջ 3.3 մլրդ դրամ): 25.12.2020-08.01.2021թ. ընդհանուր մարումների/հետգնումների ծավալը կազմել է 85 մլն դրամ և 08.01.2021թ. դրությամբ ոչ ռեզիդենտների մասնաբաժինը եղել է զրոյական: Պարտատոմսերը հիմնականում իրացվել են երկրորդային շուկայում՝ ռեզիդենտների կողմից:

Արտարժութային պետական պարտատոմսերի մասով 2020 թվականին 2019 թվականի նկատմամբ արձանագրվել է 54.3 մլն ԱՄՆ դոլարի կամ 5.6%-ի չափով նվազում, արտարժութային պետական պարտատոմսերի դրամային արտահայտությամբ 13.4 մլրդ դրամի չափով կամ 2.9 %-ով աճը պայմանավորված է փոխարժեքային տարբերությունների հանգամանքով, իսկ առանց փոխարժեքային տարբերությունների ազդեցության արտարժութային պետական պարտատոմսերի մասով պարտքը 2020 թվականին նվազել է մոտ 26.0 մլրդ դրամով կամ 5.6%-ի չափով:

Հետևաբար ՀՀ կառավարության արտաքին պարտքի աճը պայմանավորված է արտաքին վարկերի և փոխառությունների աճով, որը 2019 թվականի համեմատությամբ աճել է 372.1 մլրդ. դրամով կամ 18.0 %-ով (358.5 մլն. ԱՄՆ դոլար կամ 8.3%-ով) և կազմում է կառավարության արտաքին պարտքի աճի 97.2 %-ը, իսկ առանց արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցության (բացարձակ արժեքով)՝ 120.3 %-ը:

ՀՀ կառավարությա ներքին պարտքը 2020 թվականին կազմել է 1,000.9 մլրդ. դրամ կամ 1,915.3 մլն ԱՄՆ դոլար, աճը 2019 թվականի նկատմամբ կազմել է 263.8 մլրդ. դրամ կամ 35.8%, որը պայմանավորված է բացարձակապես ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսերի աճով: ՀՀ

կառավարության ներքին պարտքի կազմում 95.8%-ը բաժին է ընկնում ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսերին, իսկ 4,2%-ը՝ արտարժութային պետական պարտատոմսերին:

2020 թվականին ՀՀ կառավարության ներքին պարտքի կշիռը ՀՀ կառավարության պարտքի մեջ կազմել է 25.5%, որը 2019 թվականի համեմատ աճել է 3 տոկոսային միավորով: Այն 5.5 տոկոսային միավորով ավելի է ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2020-2022թթ. ռազմավարությամբ սահմանված՝ առնվազն 20% ուղենշային ցուցանիշից և 0.1 տոկոսային միավորով պակաս է ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով կանխատեսված 25.6% ցուցանիշից:

### ՀՀ կառավարության պարտքի արժութային կառուցվածքը.

Աղյուսակ 17

| | **31.12.2019թ.** | | | **31.12.2020թ.** | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մլն ԱՄՆ դոլար | մլրդ դրամ | Տես. կշիռ | մլն ԱՄՆ դոլար | մլրդ դրամ | Տես. կշիռ |
| ՀՀ կառավարության պարտք այդ թվում՝ | **6,831.9** | **3,277.3** | ***100.0%*** | **7,508.5** | **3,923.9** | ***100.0%*** |
| ՀՀ դրամով ներգրավված պարտք | 1,419.7 | 681.0 | *20.8%* | 1,834.8 | 958.8 | *24.4%* |
| Արտարժույթով ներգրավված պարտք այդ թվում՝ | 5,412.2 | 2,596.2 | *79.2%* | 5,673.8 | 2,965.1 | *75.6%* |
| USD | 2,997.5 | 1,437.9 | *43.9%* | 2,872.6 | 1,501.2 | *38.3%* |
| SDR | 1,438.2 | 689.9 | *21.1%* | 1,730.5 | 904.4 | *23.0%* |
| EUR | 724.1 | 347.3 | *10.6%* | 816.1 | 426.5 | *10.9%* |
| JPY | 225.5 | 108.2 | *3.3%* | 227.6 | 118.9 | *3.0%* |
| AED | 4.6 | 2.2 | *0.1%* | 4.0 | 2.1 | *0.1%* |
| CNY | 22.3 | 10.7 | *0.3%* | 23.0 | 12.0 | *0.3%* |

Աղյուսակ 18

| | Փոփոխությունը (աճը/նվազում) 2019թ. նկատմամբ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մլն ԱՄՆ դոլար | % | Տես.կշիռ | մլրդ դրամ | % | Տես.կշիռ |
| ՀՀ կառավարության պարտք այդ թվում՝ | **676.6** | **9.9%** | ***100.0%*** | **646.6** | **19.7%** | ***100.0%*** |
| ՀՀ դրամով ներգրավված պարտք | 415.0 | 29.2% | *61.3%* | 277.8 | 40.8% | *43.0%* |
| Արտարժույթով ներգրավված պարտք այդ թվում՝ | 261.6 | 4.8% | *38.7%* | 368.8 | 14.2% | *57.0%* |
| USD | -124.9 | -4.2% | *-18.5%* | 63.3 | 4.4% | *9.8%* |
| SDR | 292.3 | 20.3% | *43.2%* | 214.4 | 31.1% | *33.2%* |
| EUR | 92.0 | 12.7% | *13.6%* | 79.1 | 22.8% | *12.2%* |
| JPY | 2.0 | 0.9% | *0.3%* | 10.7 | 9.9% | *1.7%* |
| AED | -0.6 | -12.8% | *-0.1%* | -0.1 | -5.0% | *-0.0%* |
| CNY | 0.7 | 3.3% | *0.1%* | 1.3 | 12.5% | *0.2%* |

2020 թվականին ՀՀ կառավարության ՀՀ դրամով ներգրավված պարտքը կազմել է 958.8 մլրդ դրամ, այն 2019 թվականի նկատմամբ աճել է 277.8 մլրդ դրամով կամ 40.8%-ով և կազմում է ՀՀ կառավարության պարտքի 24.4%-ը՝ 3.7 տոկոսային միավորով ավելի քան 2019 թվականին էր:

ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռը ՀՀ կառավարության պարտքի կազմում 2020 թվականին 4.4 տոկոսային միավորով ավելի է ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությամբ սահմանված՝ առնվազն 20% ուղենշային ցուցանիշից և 0.3 տոկոսային միավորով ավելի՝ 2020 թվականի ՀՀ պետական բյուջեով կանխատեսված ցուցանիշից (24.1%):

2019 թվականի նկատմամբ 2020 թվականին դրամային արտահայտությամբ ՀՀ կառավարության պարտքի 19.7%-ով աճի՝ 646.6 մլրդ դրամի կազմում ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռը կազմում է 43%, իսկ դոլարային արտահայտությամբ ՀՀ կառավարության պարտքի աճի ՝ 676.6 մլն դոլար, կառուցվածքում այն կազմում է 61.3%:

Արտարժույթով ներգրավված պարտքը 2020 թվականին կազմել է 2,965.1 մլրդ դրամ կամ 5,673.8 մլն ԱՄՆ դոլար, այն կազմում է ՀՀ կառավարության պարտքի 75.6%-ը: Արտարժույթով ներգրավված պարտքը դոլարային արտահայտությամբ 2020 թվականին 2019 թվականի նկատմամբ աճել է 4.8%-ով, իսկ արտարժույթով ներգրավված պարտքը դրամային արտահայտությամբ աճել է 14.2%-ով, արտարժույթների փոխարժեքների փոփոխությունների ազդեցությունը կազմեում է մոտ 9.4 %:

**ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը ըստ մարման ժամկետայնության.**

Աղյուսակ 19

| ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը ըստ մինչև մարումը մնացած միջին ժամկետի | 31.12.2019թ. | | | 31.12.2020թ. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | մլն ԱՄՆ դոլար | մլրդ դրամ | Տես. կշիռ | մլն ԱՄՆ դոլար | մլրդ դրամ | Տես. կշիռ |
| ՀՀ կառավարության պարտք այդ թվում՝ | 6,831.9 | 3,277.3 | 100.0% | 7,508.5 | 3,923.9 | 100.0% |
| Կարճաժամկետ | 298.1 | 143.0 | 4.4% | 231.6 | 121.0 | 3.1% |
| Միջնաժամկետ | 1,120.9 | 537.7 | 16.4% | 2,092.8 | 1,093.7 | 27.9% |
| Երկարաժամկետ | 5,413.0 | 2,596.6 | 79.2% | 5,184.1 | 2,709.2 | 69.0% |

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը ըստ մարման ժամկետայնության 2020 թվականին փոփոխվել է հիմնականում միջնաժամկետ պարտքի աճի հաշվին, այն 2019 թվականի համեմատ աճել է 11.5 տոկոսային կետով և կազմել է ՀՀ կառավարության պարտքի 27.9%-ը: Կարճաժամկետ և երկարաժամկետ պարտքերի կշիռները 2020 թվականին 2019 թվականի նկատմամբ հակառակը՝ նվազել են: Կարճաժամկետ պարտքի կշիռը նվազել է 1.3 տոկոսային կետով՝ կազմելով ընդհանուր պարտքի 3.1%-ը, իսկ երկարաժամկետ պարտքի կշիռը նվազել է 10.2 տոկոսային կետով և կազմել է ընդհանուր պարտքի 69.0%-ը:

**ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի.**

Աղյուսակ 20

| Կառուցվածքն ըստ տոկոսադրույքի | 31.12.2019թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|
| | **100.0 %** | **100.0 %** |
| այդ թվում՝ | | |
| *լողացող տոկոսադրույքով պարտք* | *16.2 %* | *19.6 %* |
| *ֆիքսված տոկոսադրույքով պարտք* | *83.8 %* | *80.4 %* |

Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռը ՀՀ կառավարության պարտքի կազմում 2020 թվականին 2019 թվականի նկատմամբ նվազել է 3.4 տոկոսային միավորով, այն 0.4 տոկոսային միավորով ավելի է ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությամբ սահմանված՝ առնվազն 80% ցուցանիշից և 1.6 տոկոսային միավորով պակաս՝ ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով կանխատեսված 82% ցուցանիշից:

### ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքի և մինչև մարումը միջին կշռված ժամկետը բնութագրող ցուցանիշները

Աղյուսակ 21

| ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքի և մինչև մարումը միջին կշռված ժամկետը բնութագրող ցուցանիշները | 31.12.2019թ. | | 31.12.2020թ. | |
|---|---|---|---|---|
| | Միջին տոկոսադրույքը % | Մինչև մարումը մնացած միջին կշռված ժամկետ /տարի/ | Միջին տոկոսադրույքը % | Մինչև մարումը մնացած միջին կշռված ժամկետ /տարի/ |
| **Կառավարության պարտքը, այդ թվում՝** | **4.8** | **9.1** | **4.3** | **8.8** |
| արտաքին վարկերի և փոխառությունների գծով | 2.3 | 9.3 | 1.5 | 8.4 |
| ներքին վարկերի և փոխառությունների գծով | - | - | - | - |
| պետական գանձապետական պարտատոմսերի գծով | 11.8 | 10.2 | 10.4 | 10.8 |
| արտարժութային պետական պարտատոմսերի գծով | 5.9 | 6.9 | 5.9 | 6.5 |
| արտաքին երաշխիքների գծով | 1.0 | 10.0 | 1.0 | 9.0 |
| ներքին երաշխիքների գծով | - | - | - | - |

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարումը միջին կշռված ժամկետի ցուցանիշը 2020 թվականին կազմել է 8.8 տարի, այն 2019 թվականի համադրելի (9.1 տարի) ցուցանիշի նկատմամբ նվազել է 0.3 միավորով իսկ 2020 թվականի ՀՀ պետական բյուջեով կանխատեսված (9.0 տարի) ցուցանիշից՝ 0.2 միավորով, սակայն այն գտնվում է ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությամբ սահմանված 8-11 տարի ցուցանիշի սահմաններում:

Միաժամանակ՝ առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի կշիռը պետական գանձապետական պարտատոմսերի ծավալի մեջ 2020 թվականին կազմել է 11.5%, այն 2019 թվականի համադրելի ցուցանիշի՝ 12.7%, նկատմամբ նվազել է 1.1 տոկոսային միավորով և գտնվում է ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությամբ սահմանված՝ առավելագույնը 20% ուղենշի սահմաններում, սակայն 2.6 տոկոսային միավորով ավել է ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով կանխատեսված՝ 8.9% ցուցանիշից:

2020 թվականի տերեվերջին պետական գանձապետական պարտատոմսերի շրջանառության մեջ գտնվող ծավալը կազմել է 958․8 մլրդ դրամ, որոնց միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 10․4% իսկ միջին ժամկետայնությունը՝ 3945 օր:

**ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքի ցուցանիշը** 2020 թվականին 2019 թվականի նկատմամբ նվազել է 0․5 տոկոսային միավորով և կազմել է 4․3%: Միջին տոկոսադրույքի նվազումը տեղի է ունեցել արտաքին վարկերի և փոխառությունների և պետական գանձապետական պարտատոմսերի գծով պարտքերի հաշվին:

### ՀՀ կառավարության պարտքի սպասարկումը

Աղյուսակ 22

(մլրդ.դրամ)

| Միջոցառում (հոդված) | 2020թ. ճշտված պլան | Դրամարկղային ծախս | Փաստացի ծախս | Կատարման %-ը 5=3/2 x100% |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| **Ընդամենը** | **166․7** | **164․7** | **164․7** | **98.8** |
| Ներքին տոկոսավճարներ | 87․0 | 86․8 | 86․8 | 99.8 |
| Արտաքին տոկոսավճարներ, այդ թվում՝ | 79․7 | 77․9 | 77․9 | 97.7 |
| արտաքին աղբյուրներից ստացված վարկերի գծով | 50.5 | 48․6 | 48․6 | 96.3 |
| արտարժույթով պետական պարտատոմսերի գծով | 29.2 | 29․2 | 29․2 | 100.0 |

Կառավարության պարտքի սպասարկման մասով 2020 թվականի դրամարկղի և փաստացի ծախսերը կազմել են  164.7 մլրդ դրամ՝ կազմելով տարեկան ճշտված պլանի 98.8%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից 86.8 մլրդ դրամը ծախսվել է պետական գանձապետական պարտատոմսերի սպասարկման, 48․6 մլրդ դրամը՝ արտաքին աղբյուրներից ստացված վարկերի սպասարկման, իսկ 29․2 մլրդ դրամը՝ արտարժույթային պետական պարտատոմսերի սպասարկման համար:

Պետական գանձապետական պարտատոմսերի սպասարկման 2020 թվականի ծրագրային ցուցանիշից՝ 87․0 մլրդ դրամ, փաստացի ծախսի 0․2 մլրդ դրամով շեղումը պայմանավորված է պետական գանձապետական պարտատոմսերի կանխատեսած և փաստացի եկամտաբերությունների տարբերությունով,  իսկ արտաքին աղբյուրներից

ստացված վարկերի սպասարկման ծրագրային ցուցանիշից՝ 50.5 մլրդ դրամ, փաստացի ծախսի 1.9 մլրդ դրամով շեղումը հիմնականում պայմանավորված են գերմանական KfW-ի մի շարք վարկերի գծով մասհանումների ժամկետի երկարաձգման հետևանքով հատուցման վճարի նախնական հաշվարկի և փաստացի վճարման միջև 1.91 մլն եվրոյի (1.012 մլրդ դրամ) տարբերությամբ, 6-ամսյա ԱՄՆ դոլարի LIBOR, 6-ամսյա EURIBOR կանխատեսումային և վճարումների համար կիրառված փաստացի դրույքաչափերի տարբերությամբ, ինչպես նաև 2019 և 2020թթ. մի շարք վարկերի գծով մասհանումների պլանային ցուցանիշների թերակատարմամբ

### 5.3. Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին

Համաձայն ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի հիմքում դրված ցուցանիշների՝ 2020 թվականի կառավարության պարտքի մարման և սպասարկման համար կանխատեսվել է 448.7 մլրդ դրամ, որից 280.6 մլրդ դրամը պարտքի գծով հիմնական գումարի, իսկ 168.0 մլրդ դրամը՝ պարտքի սպասարկման (տոկոսավճար) համար:

Մասնավորապես.

Աղյուսակ 23

(մլրդ.դրամ)

| **Կառավարության պարտք** | **2020թ. պետական բյուջեով կանխատեսված** | | | **2020թ. փաստացի տվյալները** | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Մարում | Սպասարկում | **Ընդամենը** | Մարում | Սպասարկում | **Ընդամենը** |
| Պետական գանձապետական պարտատոմսեր | 123.2 | 85.5 | **208.7** | 110.9 | 86.8 | **197.7** |
| Արտարժութային պետական պարտատոմսեր | 46.5 | 29.2 | **75.8** | 46.5 | 29.2 | **75.8** |
| Արտաքին վարկեր | 110.9 | 53.3 | **164.2** | 103.1 | 48.6 | **151.8** |
| **Ընդամենը** | **280.6** | **168.0** | **448.7** | **260.5** | **164.7** | **425.2** |

Համաձայն ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի հիմքում դրված հիմնական ցուցանիշները.

Աղյուսակ 24

(մլրդ.դրամ)

| **Ցուցանիշներ** | 2020թ. պետ. բյուջեի | 2020թ. փաստացի |
|---|---|---|

| | մշակման հիմքում դրված ցուցանիշը | ցուցանիշը |
|---|---|---|
| ՀՆԱ (մլրդ դրամ) | 7,095.1 | 6,183.7 |
| Իրական աճ % | 4.9 | -7.6 |
| ՀՆԱ-ի դեֆլյատոր % | 3.0 | 1.9 |
| Պետական բյուջեի եկամուտներ (մլրդ դրամ) | 1,695.0 | 1,560.7 |
| Պետական բյուջեի ծախսեր (մլրդ դրամ) | 1,855.7 | 1,894.6 |
| **Պետական բյուջեի պակասուրդ** (մլրդ դրամ) | **(160.7)** | **(334.0)** |
| Պետական բյուջեի պակասուրդ, %-ներով ՀՆԱ-ի նկատմամբ % | (2.3) | (5.4) |

ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ունի հետևյալ ուղղությունները.

Աղյուսակ 25
(մլրդ.դրամ)

| Ցուցանիշ | 2020թ. պետ. բյուջեի մշակման հիմքում դրված ցուցանիշը | 2020թ. փաստացի ցուցանիշը |
|---|---|---|
| **Ընդամենը պակասուրդ**<br>այդ թվում՝ | **160.7** | **334** |
| **Ներքին աղբյուրներ**<br>որից՝ | **211.3** | **359.4** |
| **Փոխառու զուտ միջոցներ** | **144.1** | **299.6** |
| Գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքեր | 268.2 | 411.3 |
| Գանձապետական պարտատոմսերի մարում/հետգնում | (123.2) | (110.9) |
| Մուրհակների մարում | (0.9) | (0.9) |
| **Ֆինանսական զուտ ակտիվներ** | **67.1** | 59.8 |
| բաժնետոմսերի իրացումից մուտքեր | | 1.4 |
| վարկերի և փոխատվությունների տրամադրում (զուտ) | (24.6) | (20.4) |
| ելքերի ֆինանսավորմանն ուղղվող ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցներ | 45.6 | 32.3 |
| կայունացման դեպոզիտային հաշվի համալրում | - | (56.2) |
| կայունացման դեպոզիտային հաշվից օգտագործում | 46.5 | 102.7 |
| այլ | (0.4) | |
| **Արտաքին աղբյուրներ**<br>**որց՝** | **(50.6)** | **(25.4)** |
| **Փոխառու զուտ միջոցներ** | **14.3** | **54.1** |
| վարկերի և փոխատվությունների ստացում | 171.8 | 203.8 |
| ստացված վարկերի և փոխատվությունների մարում | (110.9) | (103.1) |
| արտարժութային պարտատոմսերի տեղաբաշխումից մուտքեր | - | |
| արտարժութային պարտատոմսերի մարում / հետգնում | (46.5) | (46.5) |

| | | |
|---|---|---|
| **Ֆինանսական զուտ ակտիվներ** | **(64.9)** | (79.5) |
| վարկերի և փոխատվությունների տրամադրում (զուտ) | (64.2) | (81.8) |
| բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերում | (0.7) | (0.7) |
| այլ | | 3.1 |

2020 թվականին պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին կազմել է 353.7 մլրդ դրամ, որից պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին զուտ ֆինանսավորումը կազմել է 300.5 մլրդ դրամ՝ ընդհանուր պակասուրդի 90%-ը, իսկ արտաքին աղբյուրների հաշվին զուտ ֆինանսավորումը կազմել է 54.1 մլրդ դրամ՝ ընդհանուր պակասուրդի 16.2%-ը, որից վարկերի և փոխառությունների գծով զուտ ֆինանսավորումը կազմել է 100.7 մլրդ դրամ իսկ արտարժութային պետական պարտատոմսերի հաշվին՝ (46.5) մլրդ դրամ:

## 6. ՄՈՒՐՀԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

«Մուրհակների սպասարկում» միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 93,232.0 հազ.դրամ, ճշտված պլանը՝ 93,322.30 հազ.դրամ գումար: Ֆինանսավորումը, դրամարկղի և փաստացի ծախսերը կազմել են 92,842.36 հազ.դրամ: Ապահովվել է 99.49% կատարողական: Ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 479.94 հազ.դրամ:

Նախնական տարբերակով նախատեսվել է թվով 26 մուրհակի թողարկում, սակայն մինչև 2019 թվականի տարեվերջ թողարկվել է 2020 թվականին մարման ենթակա 44 մուրհակ, որոնցից տարվա ընթացքում փաստացի մարվել է թվով 33-ը, իսկ 11 մուրհակների վճարման հայտեր 2020 թվականին չեն ներկայացվել:

## 7. ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ

«Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 35,136.0 հազ.դրամ գումար: Ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 23,452.85 հազ.դրամ: Կատարողականը ապահովվել է ընդամենը 66.75%-ով:

2020 թվականի ճշտված պլանով թվով 517 աշխատակցի փոխարեն սոցիալական փաթեթով ապահովվել են 325 աշխատակիցներ, ինչը պայմանավարված է հաշվետու ժամանակաշրջանում չհամալրված 192 միավոր հաստիքների հանգամանքով:

Տարեկան ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմել է 11,683.15 հազ.դրամ:

## 8. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Պետական հատվածի արդիականացման ծրագրի շրջանակներում իրականացվող Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգերի (ԿՖԿՏՀ) ներդրման նպատակով նախատեսված 1,820,363.10 հազ դրամ միջոցները չեն օգտագործվել: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ տեղեկատվական համակարգերի ներդման կազմակերպման համար անհրաժեշտ խորհրդատուի ներգրավման գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրի կազմման գործընթացը չի կատարվել 2020 թվականի ընթացքում, ինչը ըստ պլանի, արդեն 2020 թվականի 1-ին եռամսյակում կատարված պետք է լիներ:

Նույն հանգամանքով պայմանավորված՝ չի օգտագործվել նաև ՀՀ ֆինանսների նախարարության և ՌԴ ֆինանսների նախարարության միջև՝ Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով նախատեսված 39,830.20 հազ.դրամը:

Ֆինանսների նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն, 2020 թվականի ընթացքում նախարարությունը կազմակերպել է ԿՖԿՏՀ ներդրման գործընթացում նախարարությանը աջակցող խորհրդատուի ընտրության երկու փուլով գնման գործընթաց, մասնավորապես, 07.05.2020թ. կազմակերպվել է գնման գործընթացի առաջին փուլը: Նախաորակավորման հայտ են ներկայացրել 7 կազմակերպություններ, որոնցից նախաորակավորված մասնակից են դարձել 5-ը՝ «Հարմոնիա» ՏՏԿՁ հիմնադրամ, «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ, AAM Management Information Consulting Ltd., Deloitte Armenia CSJC, Moore Management Consulting Ltd.:

Այնուհետ սկսվել է բանակցությունների փուլը: 05.11.2020թ. նախաորակավորված մասնակիցներին է տրամադրվել մրցույթի երկրորդ փուլի հրավերը: Հրավերով հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանել 25.01.2021թ.-ը, որի դրությամբ հայտ է ներկայացրել նախաորակավորված 5 կազմակերպություններից մեկը՝ «Հարմոնիա» ՏՏԿՁ հիմնադրամը, որի հետ ընթանում է պայմանագրի կնքման գործընթաց:

## 9. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծրագրով 2020թ. տարեկան պլանով նախատեսվել է 32,112.00 հազ.դրամ, ճշտված պլանով՝ 24,993.50 հազ.դրամ: Ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 17,647.0 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 70.61%:

Պլանային ցուցանիշներից 7,346.50 հազ.դրամի շեղումը հիմնականում պայմանավորված է նախատեսված վերապատրաստվողների թվաքանակի նվազմամբ: Վերապատրաստվել է նախատեսված 1261-ի փոխարեն 932 աշխատակից:

Աղյուսակ 26

| Արդյունքի չափորոշիչներ | Տարեկան ճշտված պլան | Փաստ | Ճշտված պլանի և փաստի տարբերությունը |
|---|---|---|---|
| Գնումների համակարգողների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների թիվ, հատ | 32 | 15 | 17 |
| Վերապատրաստվող գնումների համակարգողների թվաքանակ, մարդ | 661 | 370 | 291 |
| Հանրային հատվածի ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացների թիվ, հատ | 14 | 10 | 4 |
| Վերապատրաստվող ներքին աուդիտորների թվաքանակ, մարդ | 280 | 242 | 38 |
| Ծրագրային բյուջետավորում թեմայով դասընթացների թվաքանակ, հատ | 12 | 12 | 0 |
| Ծրագրային բյուջետավորում դասընթացներին մասնակցած ֆինանսական և ծրագրային մասնագետների թվաքանակ, մարդ | 320 | 320 | 0 |
| Ներքին աուդիտորների վերապատրաստվող խմբերի միջին թվաքանակ, մարդ | 20 | 24 | -4 |
| Ծրագրային բյուջետավորում վերապատրաստվող խմբերի միջին թվաքանակ, մարդ | 15 | 15 | 0 |
| Վերապատրաստում անցած որակավորված ներքին աուդիտորների թիվը ընդամենը որակավորված ներքին աուդիտորների թվում, տոկոս | 100 | 67 | 33 |
| Վերապատրաստված գնումների համակարգողների թիվը ընդամենը գնումների համակարգողների թվում, տոկոս | 33 | 33 | 0 |
| **Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)** | **24,993.5** | **17,647.0** | **7,346.5** |

## 10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ֆինանսական կառավարման համակարգի վճարահաշվարկային ծառայություններ» միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 243,512.50 հազ.դրամ, ճշտված պլանով՝ 241,211.60 հազ.դրամ: Ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսը կազմել է 238,853.80 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 99.02%: Ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը կազմել է 2,357.80 հազ.դրամ:

Տարբերությունը, ֆինանսների նախարարության հիմնավորմամբ, պայմանավորված է բանկերի կողմից փաստացի մատուցած ծառայություններով:

## 11. ՀՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

«ՀՀ միջազգային վարկանիշի տրամադրում» միջոցառման շրջանակներում նախատեսվել է ՀՀ տնտեսական, քաղաքական և ֆինանսական ցուցանիշների գնահատման, գնահատականների հիման վրա վարկանիշի շնորհման նպատակով համագործակցություն վարկանիշ շնորհող հեղինակավոր միջազգային ընկերությունների հետ: Ծառայությունները մատուցվել են Fitch և Moodys վարկանշային ընկերությունների կողմից:

Միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեի պլանով նախատեսվել է 80,816.70 հազ.դրամ գումար, ճշտված պլանով՝ 82,316.70 հազ.դրամ: Ֆինանսավորումը, դրամարկղի և փաստացի ծախսը կազմել է 81,973.10 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 99.58%:

Ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը կազմել է 343.60 հազ.դրամ: Տարբերությունը, ֆինանսների նախարարության հիմնավորմամբ, պայմանավորված է տարադրամի փոխարժեքի փոփոխությամբ:

## 12. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ, ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ ՄԻՄՅԱՆՑ ԻՆՏԵԳՐՎԱԾ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

«Գնումների պլանների կազմման, էլեկտրոնային մրցույթների անցկացման, պայմանագրերի կատարման և գնումների հաշվետվողականության՝ միմյանց ինտեգրված մոդուլների տեխնիկական սպասարկում» միջոցառման շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեի պլանով նախատեսվել է 99,955.0 հազ.դրամ, ճշտված պլանով՝ 107,035.50 հազ.դրամ գումար: Ֆինանսավորումը, դրամարկղի և փաստացի ծախսերը կազմել են 107,035.47 հազ.դրամ: Ճշտված պլանի և դրամարկղի ծախսի տարբերությունը՝ 0.03 հազ.դրամ:

Աղյուսակ 27

| Արդյունքի չափորոշիչներ | Տարեկան պլան | Տարեկան ճշտված պլան | Փաստ | Տարբերության պատճառը |
|---|---|---|---|---|
| Պետական բյուջետային միջոցների հաշվին մրցակցային եղանակով (բացառությամբ երկփուլ մրցույթի) գնման ընթացակարգերի իրականացում էլեկտրոնային համակարգով, տոկոս | 100 | 100 | 100 | |
| Տեխնիկական խնդիրների լուծում, ծրագրային ուղղումների ներդրում, ցանցային/տեխնիկական խնդիրների հայտնաբերում, սխալների վերացում, բարդ իրավիճակների վերարտադրում, ծրագրային ապահովման ուղղումների ներդրման փաթեթների ստեղծում, հատ | 2 | 2 | 2 | |
| էլեկտրոնային աճուրդի ընթացակարգերի իրականացում էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով, տոկոս | 100 | 100 | | գտնվում է ներդրման փուլում |
| Էլեկտրոնային գնումների համակարգի կողմից սխալների կարգաբերում, տոկոս | 100 | 100 | 100 | |
| Էլեկտրոնային աճուրդի համակարգի կողմից սխալների կարգաբերում, տոկոս | 100 | 100 | 100 | |
| Խնդիր բացահայտելուց հետո վերացման ժամանակահատվածը, աշխատանքային օր | 3 | 3 | 3 | |
| էլեկտրոնային աճուրդի համակարգում ծրագրային փոփոխությունների ապահովում, օր | 180 | 180 | 180 | |
| Էլեկտրոնային գնումների համակարգի շահագործման անընդհատություն, տոկոս | 100 | 100 | 100 | |
| **Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազ.դրամ)** | **99,955.00** | **107,035.50** | **107,035.47** | |

## 13. ԴՈՏԱՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

«Համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով դոտացիաների տրամադրում և Ազգային Ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցում» ծրագրի շրջանակներում 2020թ. տարեկան ծախսերի համար 2020թ. պետական բյուջեով թվով 502 համայնքների համար նախատեսվել է 55,378,535.0 հազ.դրամ գումար: Դրամարկղային և փաստացի ծախսերը՝ 55,378,535.0 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 100%:

## V. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում էական անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

## VI. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

## VII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեում 2020 թվականի պետական բյուջեի կատարման հաշվեքննության արդյունքում անհամապատասխանություններ և խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից առաջարկություններ չեն ներկայացվել: